Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Spencer L.
Nebraska
1870

89193

9905



891.99
S-66

NOV 2017

891.99
S-66

ՎԱՐԴԱՆ ՏԻՐԱՏ

ՈՄՐԱԳՈՐԾԻՆ ՍԷՐԸ

ՏՐԱՄԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

1924

ՊՈՍԹԸՆ

E-9905

2 3 JUL 2013

5882

303
41

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-�СССР
Հայ. Ա. Մասիսյան
Ա. ՍՍՀՄ-ի ԳԱ

ՀՕՇ

Այն կարող դերասանին որ ճշմարիտ թարգմանն է կեանքի լաւագոյն գրականութեան:

Որեւէ լեզուով թարգմանելու, ինչպէս եւ ներկայացման թոյլտուութիւն տալու իրաւունքը հեղինակը իրան է վերապահում.

ՀՍՍՌ-Арм.ССР

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Թատերական արուեստը միջոցն է կեանքի յրատակութիւնը տեսնելու համար։ Թատերգութիւնը կեանք չունի, չէ կարող ներշնչում ազդել եթէ այդ թատերական արուեստը հեղինակին ստեղծագործ խղդվակէն չանցնի դէպի ունկնդիր հասարակութիւնը։ Թատերգութիւն մը չէ կարող յուզել ընթերցողը մինչեւ որ վարպետ դերասանը իր հոգեկան կենդանի ապրումներով չիդայ յուզելու ունկընդիրներու պապակ դրացումները։ Ան իր վեհապանծ գործով կը ներկայացնէ անծանօթը, անխուսափելին, աստուածայինը, ինչպէս կ'ըսէ աշխարհահռչակ Էմիրսըն։

ՀԵՂԻՆԱԿ

ԱՆՁԻՆՔ

ՆԱԹԱՆ	Ուսանող
ԲԻԻԶԱՆԴ	Մի հարուստ ազնուական
ՎԷՐԳԻՆԷ	Աղախին ազնուականի տան մէջ
ՆԱԹԱԼԻ	Բիւզանդին կինը

Դատաւոր, Դատախազ, 12-նոցի անդամներ, զինուորներ, ժողովուրդ, եւայլն.

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Հարուստ կահ կարասիներով զարդարուած մի սենեակ: Նաթալին նստած հայելիի առաջ՝ մազերն է շտկում: Սեղանին վրայ դրուած կան ամէն տեսակ հոտաւէտ ջուրեր, եւայլն:

ՆԱԹԱԼԻ.- Կամաց մը սկսում է երգի մրմռը:-

Օ՜հ, այս լման հինգ տարի է որ Նաթանից ո՛չ մի լուր առած ունիմ: Արդեօք նա մոռացա՞ւ այն խոստումը, որ սիրոյ համբոյրով պսակուեց մեր դասարանում՝ ուր՝ երբ մենք տակաւին դասընկերներ էինք, երբ մենք միշտ ուրախ, զուարթ անցնում էին կեանքը միասին ու իրարու մօտ: Նա ինձ սիրոյ խօսք տուեց, որ երբ Փարիզի Համալսարանի իրաւաբանական ճիւղը աւարտի՝ տուն վերադառնար, հոս կրկին լինելու միասին: Բայց նա մոռացաւ իր խոստումը, մոռացաւ ինձ ու այդ մոռացութեամբ ես, այսօր, ընկել եմ այս զինեմոլ հարուստին ճանկը, ուրկից պրծնիլը անհնարին է, անկարելի՛....:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Ներս է մտնում Վէրգինէ, մի նամակ ձեռքին:

ՆԱԹԱԼԻ.- Ուրկի՞ց է այդ երկտողը, Վէրգինէ:

ՎԷՐԳԻՆԷ.--- Զը գիտեմ: Նայում նամակին վրայ, եւ ուրախութեամբ.- Ա՜հ, քո նախկին դասընկեր Նաթանից է, Փարիզի Համալսարանէն:

ՆԱԹԱԼԻ.- Նաթանի՞ց: Առնում է նամակը, նայում է վրան, սեղմում է կրծքին:

Ո՜հ, ա՛յս ի՜նչ բախտ, ի՜նչ երջանկութիւն: Վերջապէս, սկսում է բուժուել այն խոր վէրքը, որ կրում էի իմ սրտին վրայ՝ այս հինգ տարիների ընթացքում: Ինձ մէկ վայրկեան առանձին, Վէրգինէ:

ՎԷՐԳԻՆԷ.- Շա՜տ հաճոյքով: Դուրս է գնում:

ՆԱԹԱԼԻ.- Անապարանոք բանում է նամակը եւ սկսում է բարձրաձայն կարդալ.-

ՓԱՐԻԶԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ,
ՖՐԱՆՍԱ,

ԻՄ ՆԱԽԿԻՆ ԱՆՈՒՇԻԿ ԴԱՍԸՆԿԵՐՈՒՀԻ
ՆԱԹԱԼԻԻՆ,

Հի՜նգ տարի է այն երեկոյից, որ իրարմէ բաժնուեցինք: Հի՜նգ տարին, հի՜նգ երկար դարեր էին, բայց վերջապէս յարգում եմ իմ խոստումը, աւարտած համալսարանական շրջանս՝ վերադառնում եմ տուն: Արդեօք պիտ կարենա՞նք մի անգամ էլ տեսնել զիրար, սիրել, գրգռիլ ու համբուրել մէկզմէկու: Ես հարցնում եմ իմ ճամբորդի բախտին, իսկ դուն էլ քո ֆնֆուշ սրտին:

Միշտ Սիրող
ՆԱԹԱՆ

ՆԱԹԱԼԻ.- Մի խորունկ շնչով կրկնում է հետեւեալ բառերը:- *«Արդեօք պիտի կրնա՞նք մի անգամ էլ տեսնել, սիրել, գրգռուել զիրար»: Ո՜հ խե՜ղճ, սիրուն Նաթան, այո՛, կարելի է մի անգամ եւս տեսնել զիրար, բայց սիրե՜լ, գրգռուել... Ո՜հ, եթէ գիտնայի որ սէրը չունէր ծերութիւն, եւ ո՛չ էլ սիրողը մոռացում, ես չը պիտի ամուսնանայի մի արբեցող հարուստի հետ, չը պիտի ծախէի իմ հոգին, իմ սէրը, իմ մարմինը սոսկ կենաց զեղխութեան համար: Ո՜հ, Նաթան, Նաթան...:*

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Ներս է մտնում Վէրգինէ անապարանոք ու վախվախով:

ՎԷՐԳԻՆԷ.-Մի քանի ազերք բռնած Բիւզանդին՝ ներս են բերում:

ՆԱԹԱԼԻ.- Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել զարմանալ:

ՎԷՐԳԻՆԷ.- Զը գիտեմ, անանկ մը վախեցայ ո՜ր:

ՆԱԹԱԼԻ.- Հը՜, անշուշտ նա կրկին զինեստուներից է վերադառնում եւ շատ բնական է որ հարբած է: Գրասեղանին վրայէն վերցնում է մի գիրք եւ Նաթանից առած նամակը դնում է գրքին մէջ եւ սկսում է գրքի ընթերցման:

ՎԵՐԳԻՆԷ.- Վերադառնում է դէպի դուռը, տեսնում է Բիւզանդին մուտքը ու անմիջապէս պահում է դռան ետին:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Բիւզանդ գինովցած, գլխարկը ծուռ, փողկապը քակուած, անհոգ, անհարակ ներս է մտնում: Նաթալին տակաւին կարդում է իր վերցրած գիրքն՝ առանց Բիւզանդի մուտքին ուշադրութիւն դարձնելու:

ԲԻԻԶԱՆԴ.-Խենդի նման: *Օ՛հ, հա՛, Նաթալի, իմ սիրուն Նա-Նաթալի, առանձի՞ն ես*: Գլխարկը նետում է աթոռին վրայ, վերարկուն մէկ կողմ՝ իսկ ներմակ կոթ ատրճանակը հանում է իր գրպանից եւ դնում է սեղանի վրայ:

ՎԷՐԳԻՆԷ.— Տեսնելով ատրճանակը վախենում է եւ դուրս է վազում, գոցում է դուռը ու բանալի ներքից նայում է ներսը:

ՆԱԹԱԼԻ.- Տխուր, առանց ուշադրութիւն դարձնելու Բիւզանդին: *Ո՛չ, ես ինձ հետ եմ*:

ԲԻԻԶԱՆԴ.- *Հը՛, Հը՛, ի՞նչ յիմար խօսք: «Ես ինձ հետ եմ»: Է՛հ, ես ալ քեզ հետ եմ*:

ՆԱԹԱԼԻ.- Բարկութեամբ դառնում է Բիւզանդին: *Կրկի՞ն խենդացած*:

ԲԻԻԶԱՆԴ.— *Խենդ դուն ես: Հը՛, սա ի՞նչ ես կարդում*: Մօտենում է:

ՆԱԹԱԼԻ.— Ոտքի է կանգնում: *Բիւզանդ, է՛լ բաւ է, սա թող վերջինը լինի, հեսի՛ ինձմէ*, յետ է քաշւում:

ԲԻԻԶԱՆԴ.- *Հա՛, հա՛*: Նաթալիին ձեռքից յափշտակում է գիրքը եւ փարիզից ստացած նամակը իյնում է գետին: Բիւզանդ փորձում է վերցունել, նոյն միջոցին Նաթալին էլ վազում է նամակին, բայց նամակը իյնում է Բիւզանդի ձեռքում:

ԲԻԻԶԱՆԴ.- *Հա՛, հա՛, որքա՜ն ճարպիկինն է*:

ՆԱԹԱԼԻ.- *Բի՛ւզանդ, այդ նամակը քեզ չէ պատկանում, այլ ինձ*:

ԲԻԻԶԱՆԴ.- *Հը՛, այս տունը պատկանում է ինձ եւ տան մէջ գտնուած ամէն ինչ էլ պատկանում է այս անձին*: Գետինից վերցրած նամակը դնում է գրպանը:

ՆԱԹԱԼԻ.- *Նամակը ինձ տո՛ւր Բիւզանդ*:

ՎԷՐԳԻՆԷ.— Տակաւին դռան ներքից ներս նայում, գոցում է դուռը:

ԲԻԻԶԱՆԴ.- *Հը՛, ինձ մի համբոյր տո՛ւր, եւ ահա այս թուղթի կտորը քեզի*: Մօտենում է համբուրելու:

ՆԱԹԱԼԻ.- *Գնա՛ զինեցուն, համբոյր տա՛ զինեի գաւաթէն, որին սովոր ես: Գինին, ու թոյնն են քո սիրահարը: Դուն ինձ խաբեցիր, դուն ինձ խոստացար, որպէս զի մի անգամ էլ չը մօտենայիր այդ թոյնի բաժակին եւ դու, դո՛ւ չը յարգեցիր քո խոստումը*: Սկսում է լալ:

ԲԻԻԶԱՆԴ.- Մօտենում է Նաթալիին եւ համբուրում է նիտը: *Հը՛, լաց մի լինիր*: Գրպանից հանում է նամակը կարդալով, որ նոյն գետին ինկած նամակն է՝ տալիս է Նաթալիին: *Ա՛ռ, հիմայ, ինչ որ ուզում էիր*: Նամակը նետում է գետին:

ՆԱԹԱԼԻ.— Վերցնում է նամակը, եւ առանց վրան նայելու, վերցնում է նաեւ իր մուշտակը, ու

Էպիլոգ

վազում է դուրս:

ԲԻԻԶԱՆԴ.- Այս ու այն կողմ ման է գալիս: *Աղջի՛, Վերգինէ, աղջի՛, Վերգինէ:*

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՎԷՐԳԻՆԷ.- Ներս է մտնում: *Ի՞նչ է ա՛էր:*

ԲԻԻԶԱՆԴ.-- *Հը՛, քանի՞ անգամ կանչելու եմ քեզ, որ ներս գայիր:*

ՎԷՐԳԻՆԷ.- *Հէ՛նց առաջի կանչիդ՝ լսեցի քեզ եւ խկոյն հոս վազեցի:* Գոգնոցին հետ է սկսում խաղալ:

ԲԻԻԶԱՆԴ.- *Հանգարա, Ուշադրութիւնդ հոս:*

ՎԷՐԳԻՆԷ.- Ձիւնուորի նման կանգնում է:

ԲԻԻԶԱՆԴ.- *Կուրծքդ դուրս, ոտքե՛րդ....*

ՎԷՐԳԻՆԷ.- Ոտքերը իրարու քով է բերում:

ԲԻԻԶԱՆԴ.- *Հիմայ, ինձ մի գաւաթ ջուր...*

ՎԷՐԳԻՆԷ.- Վերադառնում է դէպի դուռը:

ԲԻԻԶԱՆԴ.- *Աղջի, Վէրգին:*

ՎԷՐԳԻՆԷ.- Կանգ է առնում: *Այո՛, ա՛էր իմ:*

ԲԻԻԶԱՆԴ.- *Զուրին հետ մի գաւաթ էլ — հը՛ հը՛, այդ կարմի՛ր ջուրէն: Դու գիտես եա՞:*

ՎԷՐԳԻՆԷ.- *Բայց Նաթալին ինձ պատուիրել է քեզ ոչ մի բան տալ:*

ԲԻԻԶԱՆԴ.- Բարկացած: *Ո՞վ է այս տան տէրը, դո՞ւն, Նաթալի՞ն, թէ ե՞ս:*

Վէրգինէ վազում է դուրս եւ բիչ յետոյ վերադառնում է իւր հետ բերելով ապսպրուած ջուրը եւ գինին:

ԲԻԻԶԱՆԴ.- *Հը՛, հը՛, դու ի՞նչ ապուր աղջիկ ես, ի՞նչ նաղելի թռչուն:* Կոնծում է մէկ գաւաթ: *Դու,* (Վէրգինէի ծնօտի տակն է շոյում) *Դու ինձ մի համբոյր էլ չե՞ս տար:*

ՎԷՐԳԻՆԷ.- (Ամչկոտութեամբ): *Գրպանիդ նամակը ինձ տուր:*

ԲԻԻԶԱՆԴ.- *Հը՛, Զարաճճի, նամակը ես վերադարձրեցի Նաթալիին՝ հէնց քիչ առաջ:* (Կրկին ձեռքը տանում է գրպանին, դուրս է հանում մի ուրիշ նամակ եւ կարդում է պահարանը): *Հա՛ Ֆրանսա, Մոնսիոր Նաթանից է գալիս, հը՛, հը՛, երեւում է որ քո սիրահարն է գրել, հը՛, չարաճճի:*

ՎԷՐԳԻՆԷ.- (Երերում է գլուխը հաւանութեան նշանով): *Նամակը ինձ կը տա՞ս:*

ԲԻԻԶԱՆԴ.- *Մի գաւա՛թ,* (*Ցոյց է տալիս գինիին շիշը*): *Եւ մի համբոյր:*

ՎԷՐԳԻՆԷ.- (Լեցնում է գաւաթը ու տալիս է Բիւզանդին) *Նամա՞կը:*

ԲԻԻԶԱՆԴ.- (Աջ ձեռքով վերցնում է գինին, իսկ ձախով երկարցնում է նամակը Վէրգինէին եւ պատրաստւում է համբոյր առնելու: Այդ բոպէին ներս է մտնում Նաթալին՝ ձեռքին բռնած Բիւզանդից ստացած նամակը:)

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆԱԹԱԼԻՆ.- (Տեսնելով այս բոլորը): *Վերգինէ՞:*

ՎԷՐԳԻՆԷ.- Որ արդէն Բիւզանդից ստացել էր

նամակը: *Ահա* նամակը: (Տալիս է Նաթալիին:)

ԲԻԻԶԱՆԴ.- *Ո՛ւշ-շ-շ*: (Յետ, յետ, է քաշւում եւ նստում է աթոռին վրայ, ուր դրուած էր ամառուայ ծղօտէ գլխարկը:)

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

(Բիւզանդ նստած իւր խորհրդասենեակում՝ թերթ է կարդում: Դռան զանգը կը հնչէ, Վէրգինէ ներս է քերում մի հեռագիր):

ԲԻԻԶԱՆԴ.- *Ի՞նչ կայ դարձեալ:*

ՎԷՐԳԻՆԷ.- *Մի չատ կարճուտիկ նամակ:*

ԲԻԻԶԱՆԴ.- (Վերցնում է հեռագիրը եւ սկըսում է կարդալ):

ՎԷՐԳԻՆԷ.- *Բայց, բայց այդ հեռագիրը ձեզ համար չէ:*

ԲԻԻԶԱՆԴ.- (Առանց ուշադրութիւն դարձնելու Վէրգինէին առարկութեան կարդում է):

«*Սիրելի Նաթալի,*

Այս երեկոյ, ժամը ութին, նաւը հասնում է նաւահանգիստ եւ նախքան տուն երթալս պիտի հանդիպիմ ձեզ մօտ:

ՆԱԹԱՆ»

ԲԻԻԶԱՆԴ.- (Զարմացած նայում է Վէրգինէին), *Ինչ ո՞վ հրաման տուեց, որ հոս կանգնէիր:*

ՎԷՐԳԻՆԷ.- (Ուրախութեամբ): *Օ՜հ, Միւսիոր Նաթան մեզ մօտ, մեզի հիւր:* (Դուրս է վազում):

ԲԻԻԶԱՆԴ.- (Բարկացած): *Ո՞վ է սա Նաթան:* (Լուրջ խորհում է): *Ա՜հ, այն մարդը, որի սարքաղրութեամբ մի նամակ կար Նաթալիի մօտ:* (Ժամացոյցն է նայում): *Հա՛, ժամը ութին քառորդ կայ:* (Սենեակին մէջ ման է գալիս):

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արտ. ՍՍՌ
Հայ. Ա. Մյասնիկյան
Ազգային գրադարան

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Ներս է մտնում Նաթալին. շատ անհոգ ու տրխուր):

ԲԻԻԶԱՆԴ.— (Անհամբեր) *Նաթալի այլևս դառնութեան բաժակը լեցուած՝ պէտք է խօսիս, խօսք տուր ինձ, ասա՛ տեսնեմ, ո՞վ է քո այսօրուան հիւրը:*

ՆԱԹԱԼԻ.— (Անգիտակ հեռագրի հասնելուն): *Ի՞նչ հիւր, ի՞նչ ես խօսում կրկին:*

ԲԻԻԶԱՆԴ.— *Հը՛, ի՞նչ էր այն նամակը, որ դու ինձանից խլեցիր:*

ՆԱԹԱԼԻ.— (Պայուսակից հանում է նամակը եւ տալիս է Բիւզանդին) *Ահա՛ այն նամակը, որ դու ինձ տուիր:*

ԲԻԻԶԱՆԴ.— (Առնում է նամակը, եւ սկսում է կարդալ): *Հը՛, ո՛չ, սա չէ այն նամակը, որի տակ ստորագրուած կար «Միւսիոր Նաթան»:*

ՆԱԹԱԼԻ.— *Ո՛ւհ, Բիւզանդ, եթէ քո լեզուն կրկին խառնուել է մաքիզ հետ, լաւ պիտի լինէր եթէ քեզ առանձին ձգէի:*

ԲԻԻԶԱՆԴ.— *Իմ ամուսնութիւնից մինչեւ ցարդ, ես եղել եմ միշտ միայնակ, մի՛շտ առանձին եւ այդ առանձնութեանս պատճառը ես, այսօր տեսնում եմ ա՛յն նամակին մէջ, որը պիտի պարզէր դատաստանը բայց դուն խլեցիր դայն:*

ՆԱԹԱԼԻ.— *Հը՛, ես քեզանից ոչինչ եմ խլեր. այլ դու, դո՛ւ, առանց ամաչելու, համբոյր խլում Վէրզինէից եւ որի փոխան նամակը նրան բնծայ տուիր:*

ԲԻԻԶԱՆԴ.— *Վէ՞րզինէից համբո՞յր:*

ՆԱԹԱԼԻ.— *Հը, միթէ՞ այդքան չուտ կարելի էր մոռանալ երէկի այն սին կեանքը, որ չփացուց քեզ եւ դու մոռնալով ամէն ինչ՝ չփացուցիր աղախինին համբոյրների տեղատարափին տակ:*

ԲԻԻԶԱՆԴ.— *Նաթալի՛, այդ զրպարտութիւնը ես անկարող եմ տանելու, եւ դու ուզում ես ամբաստանել ինձ որպէս զի ես էլ մոռանամ այդ Նաթանի ստորագրութեամբ նամակը:*

ՆԱԹԱԼԻ.— *Բարի եղիր՝ նամակի մասին ոչ մի բառ արտասանելու: Եթէ դու փոխան քո տանը՝ սիրում ես զինեստունը, փոխան քո կնոջ՝ սիրում ես զինին, դու որ ինձ խոստացել ես հազար ու մէկ անդամներ...*

ԲԻԻԶԱՆԴ.— *Ես քեզ ոչինչ եմ խոստացել:*

ՆԱԹԱԼԻ.— *Դու խոստացել էիր հեռի կենալ զինեստունից, բայց չունեցար այն առնականութիւնը, որ յարգէիր քուկին խոստումը:*

ԲԻԻԶԱՆԴ.— *Ե՞ս, Նաթալի:*

ՆԱԹԱԼԻ.— *Դու, այո՛ դու, որ դաղրար սիրելէ քո տունը, քո կինը, ծախեցիր պատիւդ, մրսխեցիր դրամդ, ու դարձար խմելուն սիրահար, գինին գերին, ու է՛ս, է՛ս տակաւին երիտասարդ՝ ունիմ մի սիրտ, սա կուրծքին տակ, որ մինչեւ հիմայ քուկդ, քեզ հետ ու քեզ համար էր, բայց այսօր, այսօրուանից՝ նա պատկանում է այս նամակի տիրոջը:* (Դուրս հանում է Նաթանից ստացած նամակը):

ԲԻԻԶԱՆԴ.— (Անհամբեր, բարկութեամբ յա-

փըշտակում է նամակն եւ սկսում է կարդալ)։

ՆԱԹԱԼԻ.– (Փորձում է նամակը յետ խլել, բայց անօգուտ)։

ԲԻԻԶԱՆԴ.– Հը՛, հը՛, հիմայ փոխան մէկ սիրահարի՝ սիրում ես երկուքին, մէկ սրտի տեղ՝ երկու սիրտ, մէկ սիրոյ տեղ երկու սէր, երկու երես, երկու լեզու եւ երկու ժպիտ ես կրում քո վրայ։

ՆԱԹԱԼԻ.– *Ո՛չ, ինձ համար մէկ է կեանքը, մէկ է սիրտը, լեզուն, ժպիտը, բայց դու բաժնեցիր իմ կեանքը, կտրեցիր իմ սիրտը եւ սէրս հոգին փշեցիր։ Դու կրքի ու զինելի մարդ դարձար, մոռացար ամէն ինչ, շփացած քո դրամի առատութիւնից, կարծում էիր, որ դու ինձ ծախու ես առել, վայելեցիր իմ գեղեցկութեան կոկոնը, ու հիմակ էլ լքում ես, անարգում ես ինձ, որովհետեւ սիրոյ գաղտնիքը չես հասկացել, որովհետեւ մի զինեմոլ դարձած՝ զինեատան մէջ՝ չես տեսնում լոյսը, քո աչքերը միշտ մութ են ու դու չուարած։*

ԲԻԻԶԱՆԴ.– Եթէ դու ինձ անուանում ես զինեմոլ, ապա քեզ պէտք է կոչեմ ՀԱՆՐԱՅԻՆ կին։

ՆԱԹԱԼԻ.– *Ո՞ւհ, հանրային կին։*

ԲԻԻԶԱՆԴ.– Այո՛, որ թողուցած քո ամուսինը, սիրում ես ՓԱՐԻԶԻ մի աղքատ ուսանողի։

ՆԱԹԱԼԻ.– *Այո՛, սիրում եմ աղքատ ուսանողին, որովհետեւ նա աղքատ է եւ այդ ձեր անարգած աղքատութեան մէջ՝ հէնց կեանքը աւելի հարազատ, աւելի սուրբ ու մաքուր է, քան ձեր այս դրամի առատութեան մէջ, ուր դուք կորցրել էք*

ձեր խելքը ու տանջւում էք առանց խորհուրդի։

ԲԻԻԶԱՆԴ.– Հապա ինչո՞ւ հագել ես այդ հարուստ զարդերը, որոնք հարուստին են պատկանում։

ՆԱԹԱԼԻ.– (Կտրում է զարդերը, հանում է մատանին եւ նետում է Բիւզանդի երեսին)։ *Ա՛ռ, ինչ որ կարծում ես քուկդ է, եւ ինձ թող իմ սէրը, որովհետեւ ես չեմ կարող սիրել մէկին, որի մէջ սէր չը կայ, որի սիրտը քարացել է, իսկ միտքը՝ բթացած։*

ԲԻԻԶԱՆԴ.– Ուրեմն դու սիրում ես մէկին, որի սիրտը գերադաս ես նկատում իմ սրտից։

ՆԱԹԱԼԻ.– *Այո՛, սիրում եմ նրան, որովհետեւ դու չը կրցիր սիրել ինձ, սիրում եմ նրան եւ նրա հետ ես ուզում էի ՓԱՐԻԶ գնալ, բայց դու արգելեցիր ինձ, ամբողջ աշխարհի հարստութիւնը ինձ էիր խոստանում, ծախու տուիր իմ պատիւը, թունաւորեցիր իմ ներքին զգացումը, եւ հիմակ էլ ինձ անուանում ես հանրային կին։*

ԲԻԻԶԱՆԴ.– Հանրային է այն կինը, որ մէկ ամուսնի տեղ երկուք է սիրում, մէկ պատկի տեղ երկու պատկ է ուզում կրել իր գլխին։

ՆԱԹԱԼԻ.– *Եւ սիրում եմ մէկին եւ ոչ երկուքին։ Եթէ հանրային կին եմ ես, թող տուր ինձ հանրութեան գնալ։* (Վազում է դէպի դուռը։)

ԲԻԻԶԱՆԴ.– (Անցնում է Նաթալիի առաջ ու գոցում է դուռը։) *Ես քեզ թոյլ պիտի տայի գնալ հանրութեան այն ժամանակ, եթէ դու հիւր չունենայիր այսօր իմ տանը։*

ՆԱԹԱԼԻ.— (Ցետ է քաշուում, մօտենում է սեղանին եւ դուրս է քաշում ատրճանակը)։ *ԵԹԷ իմ մէկ ձեռքը չը բաւէ, միւս ձեռքում պիտի տեսնես ատրճանակը*(քաշում է ատրճանակը)։

ԲԻԻԶԱՆԴ.— *Վա՛ր դիր այդ սատանայի գործիքը, եթէ ոչ....*

ՆԱԹԱԼԻ.— *Վա՛ր, բայց վար պէտք է գլորուիս դու, դու կնոջ անարգող, վախկոտ։ Իմ գերեզմանին մէջ իսկ պիտի տեմ քեզ, գաղա՛ն, անսի՛րտ բաց արա դուռը։*

ԲԻԻԶԱՆԴ.— *Ես նախ պիտի բաց անեմ քո սիրտը*, (Մօտենում է), *եւ կարդամ հոն թագնուած մի անառակ կնոջ գաղտնիքը։*

ՆԱԹԱԼԻ.— *Մի՛ մօտենար ինձ, Բիւզանդ, գընդակը մեղք է։*

ԲԻԻԶԱՆԴ.— (Աւելի է մօտենում)։ *Բայց մեղք չես դո՛ւն։*

ՆԱԹԱԼԻ.— *Բիւզանդ։* (Ատրճանակը պարպում է, Բիւզանդ իյնում է գետին)։

ԲԻԻԶԱՆԴ.— *Ի՛նձ, ի՛նձ վիրաւորեցիր դու Նաթալի*, (Մեռնում է)։

ՆԱԹԱԼԻ.— (Սուր ճիչով սենեակի այս ու այն կողմն է վազում, ատրճանակը նետում է գետին, բացում է դուռը եւ փախչում է դուրս։)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Այս բոլոր իրարանցումից վերջ, ներս է մտնում ՆԱԹԱՆ ուրախ, զուարթ։ Անտեղեակ ոճիրի կատարման, յանկարծ տեսնում է մէկը գետին ինկած, վազում է դէպի դիակը, նայում է երեսին, բարձրացնում է գլուխը, ճնշում է, դիակին ճոյ ինկած կը տեսնի ատրճանակը, իսկոյն վեր կառնէ։ Բիւզանդին ձեռքին մէջ կը տեսնի մի նամակ, վերցնում է այդ նամակն էլ սկսում կարդալ)։

ՆԱԹԱՆ.— *Ո՛ւհ, նամակը որ գրել էի Նաթալիին։ Ախ, Աստուած իմ։* (Վազում է դէպի դուռը, նախ քան դուրս ելնելը ոստիկանները վրայ են հասնում ու ձերբակալում են Նաթանին)։

ՆԱԹԱՆ.— *Ձերբակալեցէ՛ք ինձ, բայց ոճրագործը՝ հարցրէք սա ատրճանակին տիրոջը։*

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԻՆԳ ՏԱՐԻ ՎԵՐՋ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Դատաւորն ու Դատախազը գրաւել են իրենց յատուկ տեղերը, 12-նոցի անդամները դատաւորի աջ կողմը, իսկ ժողովուրդը՝ ձախ: Ժողովուրդի մէկ մասը ներկայ է, իսկ միւսը տակաւին մէկ մէկ ներս է մտնում: Ամէնից վերջ ներս է մտնում սեւ հագած մի կին, շղարշը երեսին, ընկնուած՝ նըստում է ժողովրդին մէջ):

ԴԱՏԱՒՈՐ.- Ներս բերէ՛ք բանտարկեալին:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Երկու զինուորներ ներս են բերում բանտարկեալին, տրտում եւ ընկնուած: Երբ Նաբալին տեսնում է նրա մուտքը, սկսում է իր աչքի արցունքը սրբել:)

ԴԱՏԱՒՈՐ.- Ի՞նչ է ձեր ամբաստանագիրը, Պարոն Դատախազ:

ԴԱՏԱԽԱԶ.- (Վեր է կանգնում):

«Տէր Դատաւոր եւ երդուեալ Տիրք:- Դժուարին է պարզել գործուած ոճիրի այն իրողութիւնը, որը տեղի է ունեցել սրանից հինգ երկար տարիներ առաջ՝ Բիւզանդ անունով մի հարուստ ազնուականի տան մէջ: Այս դասը սրանից առաջ փորձուել է մի քանի անգամներ, եւ բանտարկեալը դատապարտուել է մահուան իւր յանցանքի համար ու այս

լինելով երրորդ փորձը եւ վերջինը՝ պէտք է ըզգացուում լուրջ եւ խոհուն վճիռի արձակման:

«Այս ոճիրի պատճառը տեսնուում է մի ոճրագործի սիրոյ վրէժխնդրութեան մէջ: Բիւզանդին կինը, որ իւր էրկան սպանութենէն մինչեւ ցարդ անյայտ է, եւ ոչ ոք գիտէ նրա ուր լինելը, նէ կը սիրէ եղել Փարիզի Համալսարանին մէջ իրաւաբանութիւն ուսանող մի երիտասարդ՝ Նաթան անունով, որ առայժմ հոս է, ամբաստանուել է նա՝ որպէս ոճրագործ: Այսպէս, երբ ամբաստանեալը աւարտում է իւր դասընթացքը եւ վերադառնում է տուն, նա իմանալով որ իւր սիրուհին ամուսնացել է Բիւզանդ անունով մի հարուստ ազնուականի հետ, սիրոյ նախանձը սկսում այրել երիտասարդ սիրահարին եւ նա գիշեր ատեն պատուհանից գաղտնի մտնում է Բիւզանդի ննջասենեակը եւ սպաննում է զայն հէնց այս տարձանակով: (Ցոյց է տալիս ատրճանակը):

«Երբ ամբաստանեալը՝ այս ոճիրէն վերջ՝ շարուում է իւր ընելիքէն փոխան իւր ներս մտած պատուհանից դուրս ցատկելու՝ բաց է անում դուռը դուրս վազած միջոցին՝ ոստիկանները վրայ են հասնում եւ ոճրագործը հոն ձերբակալուում է: Նա իւր ձեռքին մէջ ունի եղել նա տարձանակը, որի համար ինքն էլ վկայել է, այսպէս ասելով՝ զինքը ձերբակալող ոստիկանութեան. «ԵԹԷ ՈՒԶՈՒՄ ԷՔ ՈՃՐԱԳՈՐԾԸ, ՀԱՐՑՐԷՔ ԱՅՍ ԱՏՐՃԱՆԱԿԻ ՏԻՐՈՋ»: Արդէն իսկ մի հաստատուած իրողութիւն է, որ այս տարձանակը պատկանում է ամբաստան-

հալին, որը իր հետ է բերել Փարիզից։ Ինքն է ա-
տրճանակին տէրը եւ հետեւաբար գործուած ո-
ճիրին պատասխանատուն»։ (Վերջացնում է իւր
ճառը եւ նստում)։

ՎԷՐԳԻՆԷ.— (Ատրճանակը տեսնելով), Ո՛չ, ո՛չ
այդ ատրճանակը Նաթանին չէ պատկանում, այլ
Բիւզանդին, ես ճանաչում եմ։ (Ոտիկանը լռեց-
նում է Վէրգինէն,)

ՆԱԹԱԼԻ.— (Ոտքի է կանգնում, ուզում է խո-
սել, բայց ոստիկանը նոյնպէս ստիպում է նրան,
որպէս զի նստի ու նէ հեծկլտանքով կրկին գրա-
ւում է իւր աթոռը)։

ԴԱՏԱՒՈՐ.— Հիմայ, կարդը քուկդ է, բան-
տարկեալ։ Ի՞նչ է ձեր պաշտպանողականը։

ՆԱԹԱՆ.— (Ոչինչ է ասում, այլ լուռ-մունջ
խորհում է)։

ԴԱՏԱՒՈՐ.— (Բարկութեամբ)։ Կարդը ձերն
է, ամբաստանեալ, խօսէ՛ ճշմարիտը, ըսէ՛ միայն
կատարուած իրողութիւնը։

ՆԱԹԱՆ.— (Ընկնուած ոտքի է կանգնում)։

Տէր դատաւոր եւ դուք, արդարադատ՝ երդ-
ուեալ Տիրոջ։

Դժուարին է ճշմարիտ իրողութիւնները փընտ-
ռել մութ խաւարին մէջ, երբ փնտռողին աչքերը
կոյր են եւ չեն տեսնում։ Կոյր են իմ աչքերը, քա-
ղցած է իմ սիրտը, որովհետեւ հինգ տարուայ
բանտարկեալի կեանքս արդէն մեռցուցել է իմ մէջի
այն վառ յոյսերը, որոնցմով ես օրօրւում էի իմ
երիտասարդ դպրոցական շրջանում, երբ ուզում էի

ապրել, ուզում էի սիրել ու մի՛չտ սիրել։ (Ձայնը
իջեցնում է)։ Բայց անկարող եմ սիրել, այսօր,
որովհետեւ մի անբուժելի ոճիրի զոհ եմ դարձել,
զրկուել եմ իմ ծնողքի անուշ զրգուանքից, չը դի-
տեմ արդեօք տակաւին ապրո՞ւմ է ինձ ծնող մայ-
ը։ Ո՛չ, նա շատ ծեր էր, մեռեր է։ Ա՜խ երանի թէ
մեռնէին այն ամէնքը, որպէսզի նրանք չը տեսնէին
ինձ՝ այս վիճակի մէջ, չը տեսնէին արդար, մի
անմեղ սրտի տանջուիլը՝ վաղահաս մահուան սեւ
ճիրանների մէջ, որի մասին բնաւ չէի մտածել, ո-
րովհետեւ ուսանող էի, որովհետեւ երիտասարդ է-
ի։ Ո՛չ, ո՛չ յանցաւոր չեմ ես։

Այո՛, ինչպէս տացիք, ոճրագործը պէտք է դա
տապարտուի։ Բայց ո՞վ է ոճրագործը։ Ինչո՞ւ է
գործուել այդ ոճիրը, որանք տակաւին մութ են իմ
դատողութեանը, իմ սրտի բարեխման։ Իրաւցընէ
ես սիրել էի սպանուող հարուստի կնոջ, բայց իմ
սէրս անարատ, անկեղծ սէր էր, երբ Նաթալին տա-
կաւին չէր ամուսնացել։ Երբ նա էլ անարատ ու ան-
կեղծ էր։

Ես բնաւ չեմ սիրել ոչ մէկի կնոջ, այլ սիրել,
խենթի պէս սիրել եմ իմ պաշտելի սիրուհուն, եւ
իմ հինգ տարուայ ուսանողութեան շրջանին՝ դըժ-
բախտաբար նրան զրել եմ մէկ նամակ կարդալով
թէ Նաթալին տակաւին օրիորդ էր, չէր մոռացել
իւր նախկին խոստումը, տակաւին ունէր իւր մէջ սի
րոյ վառ զգացումը եւ սպասում էր իմ վերադարձին։
Բայց նամակս հասնում է եւ շատ ուշ, երբ ամէն
ինչ մոռացուել, սէրս սիրոյ մէջ խեղդուել էր։

ՏԷՐ ԴԱՏԱՒՈՐ, ԵՐԳՈՒԵԱԼ ՏԻԱՐՔ:

ՍԷՐԸ կոյր է եւ իմ կոյր սրաի սիրով՝ ես սիրում էի Նաթալիին հինգ երկար տարիներու իսր լռութեան մէջից եւ ուզում էի իմ չրջանաւարտութիւնից վերջ նախքան ծնողքիս երթալը՝ գնալ, տեսնելու, զրգուելու իմ սիրուհուն, ու երբ մօտեցայ դռան, դուռը բաց զտայ իմ քայլերին առաջ, բայց չը համարձակեցայ մտնել, որովհետեւ բաց դռան ետին թագնուած գաղնիքը շատ բաղձալի չը լինիր սիրահարների համար: Ի՞նչ կարող էի անել: Ուրախ զուարթ էի զգում ես ինքզինքս, ու ներս վազեցի գրկաբաց: Աստուա՛ծ իմ, ի՞նչ տեսայ գետինը:- Սպանուած մարդուն անչունչ դիակը, նաեւ իր մօտ կար այն տարճանակը որ գործել է ոճիրը, բայց չի խօսիր նա, յանցաւոր է ու չի խոստովանիր իւր յանցանքը: Իսկ ի՞նչ է մնում ինձ: Ես պատրաստ եմ անսալու արդարադատ վճիռի վախճանին, բայց լսեցէք, մտիկ ըրէք իմ ընկճուած սրաի ներքին աշխարհին, որ ես սիրում էի Նաթալիին, երբ նա տակաւին կոկոն էր, երբ նա իմս էր, երբ իմ կեանքի ամբողջ երազներս նրա պատկերով կը հիւսուէին, բայց հիմա՛յ, հիմա՛յ, տառում եմ, տա....

ՆԱԹԱԼԻ.-- (Ոտքի է կանգնում) Նաթան մի՛ մի՛ տաեր, որովհետեւ...

ԴԱՏԱՒՈՐ.- Լռութիւն:

(Ոստիկաններ լռեցնում են աղմկող կնոջ՝ Նաթալիին):

ՆԱԹԱՆ.-Տէր Դատաւոր, Երգուեալ Տիարք:

Ձեր սրտին, ձեր մաքուր դատողութեան եմ դիմում արդար վճիռ ստանալու: Եթէ դուք կարծում էք, որ ես եմ գործել այդ ոճիրը, որովհետեւ ես սիրել եմ Նաթալիին՝ ուրեմն ես սիրոյ զոհ եմ դարձել, թողէք ինձ հո՞ն, ուր որ էի երէկ, թողէք ինձ մութ անկիւնները, որպէս զի ողբամ ես իմ սիրոյ ողբերգութիւնը, թողէք ինձ առանձնութեան մէջ, որպէս զի դադրիմ սիրելէ ու սովորիմ ատել, այն, որ խոստումը չէ պահում, խքնզինքը դրամի է ծախում: Դատապարտեցէք ինձ, որպէս սիրոյ ոճրագործ, որովհետեւ ոճիրը գործող ձեռքը անյայտ է և ես եմ բռնուած որսը: Բայց չը մոռնանք, սիրահարների աշխարհին մէջ՝ Սէրն է միակ թագաւորող Աստուածը: Իսկ ձեր այս չարաչուք աշխարհին մէջ՝ բոլոր սիրահարները դատապարտելի են, բայց ոչ յանցաւոր:

ՆԱԹԱԼԻ.- Յանցաւորը ե՛ս եմ, ոճրագործը հո՛ս հոս է Նաթան:

ԴԱՏԱՒՈՐ.- Լռութիւն:

ՆԱԹԱԼԻ.- (Նետւում է առաջ): Անկարելի է լռել, Տէր Դատաւոր, Ես եմ սիրոյ ոճրագործը, ես սպանեցի զայն, դատապարտեցէք ինձ, բայց ոչ Նաթանին:

(Նաթանին) Դո՛ւ, դո՛ւ, չա՛տ մաքուր, չա՛տ անկեղծ ես, Նաթան: Այո, ես ծախեցի ինքզինքս, իմ սէրս, որ քուկդ էր, իմ պատիւը, որ անարատ էր, ու այլեւս ես արժան չեմ քո սիրոյն, որովհետեւ տեցիր, անիծեցիր ինձ: Ահա իմ արժան պատիժը: (Դրպանից հանում է մի պզտիկ շիշ թոյն

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ՀՍՍՌ-Արմ.ՍՍՀ
Ա. Մ. Ա. Միասնական
ՄՈՍԿՎԻՑԱՅԻ ԱՆՎԱՆ

եւ խմում է, խելագար իյնում է գետին, Նաթան օգնութեան է հասնում, ժողովուրդը իրար է անցնում, դատաւորը, դատախազը ոտքի կանգնած՝ նայում են ապշահար:

ՆԱԹԱՆ.- (Նաթալին իւր գրկին առած) *Նաթալի, ների՛ր ինձ, ու թող որ համբուրեմ քո թունաւոր շրթունքները* (Համբուրում է): *Քու յաւիտենական սիրով՝ գրկեմ, բաժանուիմ քո ցաւրա, պաղ, բայց անմոռաց շիրիմից, իմ վառ երազներից, իմ երջանիկ, բայց եւ տանջալից կեանքից:*

ՎԱՐԱԳՈՅՐ

ՎԵՐՋ

58.821